ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/2340-21առ "03" 09 2021թ.

Ձեր №_____ առ "_____" _____ _ 2021թ.

«Դավիթ-94» ՍՊԸ-ի տնօրեն՝
պրն. Կ.Բարեկյանին
E-mail: 94.david@bk.ru

{№01/055 առ 02.04.2021թ. պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ}

Հարգելի պարոն Բարեկյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կարիքների համար «Առանցքակալ» ապրանքների ձեռք բերման նպատակով «ԴԱՎԻԹ-94» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. ապրիլի 2-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-44/21-01/055 պայմանագիրը, որի արդյունքում Ձեր կազմակերպությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարել՝ 2-րդ չ/բ 8 հատ առանցքակալ 92000 (իննսուներկու հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով և 3-րդ չ/բ 20 հատ առանցքակալ 358000 (երեք հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Պայմանագրով մատակարարվող 2-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ առանցքակալը որոնց ընդհանուր գինը կազմում է 92000 (իննսուներկու հազար) ՀՀ դրամ և 3-րդ չ/բ 20 հատ առանցքակալ որոնց ընդհանուր գինը կազմում է 358000 (երեք հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ «ԴԱՎԻԹ-94» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»:
- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»:
- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:

- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

  Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝
- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԴԱՎԻԹ-94» ՍՊԸ-ի հետ 2021թ. ապրիլի 2-ին կնքած թիվ 01/055 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրեն՝ **Է.Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60